

«Թագքիրաթ ալ-մուլուքը» որպես Սեֆյան պետության պատմության սկզնաղբյուր

Սեֆյան դարաշրջանը Իրանի պատմության կարևոր շրջափուլերից էր, որի ընթացքում նոր զարգացում են ապրում իրանական պետականությանը հատուկ հիմնական սոցիալ-տնտեսական ու վարչաքաղաքական կառույցները և համակարգերը, որոնք Սեֆյան պետության անկումից հետո դեռ երկար ժամանակ շարունակեցին իրենց գոյությունն ու գործունեությունը նաև հաջորդ թագավորական տների իշխանության ժամանակներում:

Սեֆյան արքունիքը մշակել էր որոշակի համակարգ, որի շնորհիվ քաղաքական, վարչական և ֆինանսական բնագավառներում վերահսկվում էր տեղական վարչակազմի գործունեությունը: Կառավարման գործընթացում կարևոր նշանակություն ունեին վարչաքաղաքական բաժանումները, որոնք վճռորոշ դեր խաղացին այդ շրջանների հետագա քաղաքական կարգավիճակի ու ճակատագրի հարցում:

Էթնիկ բազմազանության պայմաններում Իրանում պետականության ստեղծումը ուղեկցվել է ոչ միայն ռազմական պարտադրանքի, այլև տարբեր հավատների դավանող և տարբեր կարգավիճակ ունեցող բնակչության, տարբեր կենսակերպ ունեցող ցեղերի ու ժողովուրդների համակեցության ապահովման միջոցով: Թե ինչպիսի գաղափարական սկզբունքի և հիմքի վրա էր ձևավորվել Սեֆյան հարստության կառավարման համակարգը, Ռոջեր Սեյվորին հետևյալ բացատրությունն է տալիս. «Սեֆյան հարստությունը ձևավորվեց երեք գլխավոր սկզբունքների հիման վրա, առաջինն այն էր, որ Սեֆյան շահերը նախաիսլամական շրջանի թագավորների նմանությամբ իրենց Աստծու ներկայացուցիչը կամ, ինչպես իրենք էին անվանում,

«սայեյե խոդավանդ բար զամին՝ Աստծու ստվերը երկրի վրա» (ظل الله في الارض كيام سايه خداوند بر زمين) էին կոչում, երկրորդ՝ ընդունելով շիիզմը, որպես պետական կրոն, իրենց նաև համարում էին շիաների փրկչի՝ Մահդիի ներկայացուցիչը երկրի վրա և երրորդ, որպես սուֆիական առաջնորդներ, ինչպես ընդունված էր սուֆիական ուսմունքում, իրենց ենթակաների փիրը կամ առաջնորդն էին: Այս երեք պատճառներով էլ նրանց պիտի ենթարկվեին երկրի հոգևոր և զինվորական բոլոր կառույցները, իսկ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ղզլբաշները սուֆիզմի հետևորդներ էին, ուստի պիտի ենթարկվեին շահերին, այլապես «նասուֆի կհամարվեին»:⁸²

Մեֆյան հասարակության կառույցը բրգաձև է եղել, որի գագաթին շահն էր, որպես «արդար» իշխանավոր, որի ենթակա-ները նրա հովանու ներքո «երջանիկ» ապրում էին: Պետություն - «դովլաթ (دولت)» բառի սկզբնական իմաստը իրենից ներկայաց-նում էր՝ օրինություն և երջանկություն, սակայն հետագա դարե-րում իմաստափոխվելով՝ «պետության» և «երկրի» իմաստ է ստանում: Այդ դիտանկյունից էլ երկիրը կառավարող գերագույն ատյանի անդամները կոչվել են «պետության հենասյուններ» (արքան-ե դովլաթ), իսկ գլխավոր վեզիրը կոչվում էր «պետության վստահություն, հավաստ» (է՛թեմադ ալ-դովլե)»: Բուրգի ներքևի համվածում հասարակության զանազան խավե-րի ներկայացուցիչներն էին՝ առևտրականներ, արհեստավորներ, գյուղացիներ և այլն:⁸³ Մեֆյան պետությունը ներկայացնելու համար նաև օգտագործվել է «մամալեք-ե մահրուսե» (ممالک محروسه)

⁸² سیوری راجر، تحقیقاتی در تاریخ ایران عصر صفوی، ترجمه عباسقلی غفاری، تهران، 1382، صص. 242-243

⁸³ سیوری راجر، ایران عصر صفوی، ترجمه کامبیز عزیزی، تهران، نشر مرکز، 1385، ص. 174.

արտահայտությունը, որը բառացի նշանակում է «պաշտպանության տակ գտնվող երկրներ»⁸⁴:

Երկրի գլխավոր խնդիրների քննարկման և որոշումների կայացման գործում շահին օգնում էր յոթ անձից բաղկացած խորհուրդը, որի անդամներն էին «պետության հենասյուներ» (արքան-ե դովլաթ) կոչվող ամիրները (*դոռչի բաշին, դուլլարա-դասին, իշիքադասի բաշին և թուֆանկչիադասին*), մեծ վեզիրը (կամ *է'թեմադ ալ-դովլե*), *դիվանբեկին* և *վադե'ե ննիսը*⁸⁵:

Մեֆյան հարստության նախնական շրջանում երկիրը ղեկավարվել է կրոնապետական եղանակով, որի հետևանքով էլ հնարավոր չէր բաժանում սաեմանել պետական և կրոնական պաշտոնների միջև, որով և բացատրվում է քաղաքական և զինվորական բնագավառներում հոգևորականության ակտիվության պատճառը: Նրանք բնական էին համարում զինվորական և աշխարհիկ պաշտոնների համատեղումը հոգևոր դիրքի հետ: Ինչպես նահանգներում, այնպես էլ քաղաքներում հոգևորականության ներկայացուցիչներն օժտված էին մեծ իրավունքներով ու իշխանությամբ: *Սադրերի* ու *դագիների* իրավասության ներքո էին գտնվում *շարի'աթական* դատարանները, *վակֆային* կալվածքներին վերաբերող գործերը: «*Խասսե*» համարվող շրջանները վերահսկվում էին շահական հատուկ աատիճանավորների՝ *վեզիրների* կողմից: Պետության կենտրոնացման քաղաքականության շրջաններում բաղկացուցիչ մասն էր հանդիսանում շահապատկան և պետական հողերի հարաճուն ավելացումը:

⁸⁴ بیتر جکسون / لورنس لاکهارت، تاریخ ایران کمبریج (جلد ششم، قسمت دوم) دوره صفوی، ترجمه: تیمور قادری، تهران، انتشارات مهتاب، 1387، ص. 212.

⁸⁵ Տե՛ս ստորև, էջ 84:

Դա հնարավորություն էր տալիս, որ շահի գանձարան հոսեն հսկայական հարստություններ⁸⁶:

Իրանի պատմության մեջ առանձնացվում է Սեֆյան հարստության վարչական կառույցի զարգացման երեք շրջան⁸⁷: Առաջին շրջանը ընդգրկում է շահ Իսմայիլ Ա-ի գահակալությունից մինչև շահ Աբբաս Ա-ի գահակալությունն ընկած տարիները, երբ վարչական համակարգը գտնվում էր փոփոխությունների և կազմավորման փուլում: Այդ ընթացքում պետության պաշտոնյաների պարտականությունները հստակ որոշված չէին և հաճախ իրար էին խաչաձևվում: Երկրորդ շրջանը ներառում է շահ Աբբաս Ա-ի ողջ գահակալությունը, երբ վերջինս փոփոխության ենթարկելով երկրի վարչական կառույցը՝ հիմնականում նոր հիմքերի վրա դրեց այն՝ խիստ ամրացնելով նրա վարչատնտեսական համակարգը: Իսկ երրորդը՝ Սեֆյան պետության աստիճանական թուլացման և անկման շրջանն է, որ սկսվում է շահ Սեֆի Ա-ի գահակալությունից և ձգվում մինչև Սեֆյան պետության կործանումը:

Առաջին շրջանում իշխանությունները առավելապես վարում էին նվաճողական ու ինքնահաստատման քաղաքականություն: Իշխող համակարգը ռազմական կողմնորոշում ուներ, որով համեմատաբար պակաս դերակատարություն էր վերապահում երկրի վարչական կառուցակարգի զարգացման գործընթացին: Սեֆյան հարստության սկզբնավորման ու ձևավորման ժամանակաշրջանում կրոնական, քաղաքական և զինվորական կառույցները հստակ տարանջատված չէին և շարունակ

⁸⁶ Բայբուրդյան Վ., Իրանի Պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 327-328:

⁸⁷ 218. پیتر جکسون / لورنس لاکهارت، تاریخ ایران، ص.

միջամտում էին միմյանց գործունեությանը⁸⁸։ Սեֆյան շահ Իսմայիլի գահակալության վերջին տարիներին սկսած, ինչպես նաև նրա հաջորդների իշխանության ժամանակաշրջանում այդ կառույցները աստիճանաբար ընդարձակվեցին, ձևավորվեցին զանազան պաշտոններ, որոնք ունեին իրենց որոշակի պարտականությունները։ Սեֆյան հարստության ռազմական հենարանը ղզլբաշական ցեղերն էն, որոնց ավագանին սկզբնական շրջանում զբաղեցնում էր կարևորագույն զինվորական պաշտոնները։

Շահ Աբբաս Ա-ն իր գահակալության ժամանակ խիստ թուլացրեց ղզլբաշներին, ուժեղացնելով երկրի կենտրոնական իշխանությունը և վարչական կառույցը։ Նա տարանջատեց աշխարհիկ և կրոնական իշխանությունները, որով վարչական կառույցը ստացավ ամբողջական տեսք։ Ղզլբաշական ուժերի թուլացմանը զուգընթաց ուժեղացան վարչական ատյանները, որոնք կարճ ժամանակահատվածում վերածվեցին բարդ կառույցների⁸⁹։

Շահ Աբբասը ձգտում էր երկրում ստեղծել հասարակական և վարչական նպատակալաց կառույցներ։ Շահ Աբբաս Ա-ը գիտակցում էր, որ եթե երկրի հնագույն հզոր զինվորական բազուկի՝ ղզլբաշների թուլացումն ու վերացումը հետաձգվի, ապա այն վնասելու էր պետության հզորությանը և կայունությանը։ Այդ գործընթացը խթանելու նպատակով նա ստեղծեց իրեն ենթարկվող նվիրյալների վստահելի մի կառույց՝

⁸⁸ Իմեր Ջեկսոն / Լորնս Լակհարտ, *Երկրի պատմություն*, 219 Վ. Իրան, 1979 Վ.

⁸⁹ Իմեր Ջեկսոն / Լորնս Լակհարտ, *Երկրի պատմություն*, 230 Վ. Իրան, 1979 Վ.

բաղկացած շահսենների զինվորական խմբերից, որի մեջ ընդգրկվում էին գահին հավատարիմ ղզլբաշները:⁹⁰

Նա ստեղծեց մի գորեղ վարչատնտեսական համակարգ, որը պետք է ապահովեր երկրի տնտեսական զարգացումն ու բարգավաճումը: Շահ Աբբաս Ա-ն իր տնտեսական ծրագրերի իրականացման ծիրում արտաքին առևտրի մենաշնորհը և արքունի արհեստանոցների հսկողությունը ևս կենտրոնացրեց իր ձեռքում: Շահ Աբբաս Ա-ի կառավարման տարիներին Սեֆյան Իրանը դարձավ հզոր կենտրոնացված պետություն, որն իրենից ներկայացնում էր տիպիկ արևելյան բռնապետություն, որտեղ առաջին և վերջին խոսքը պատկանում էր ինքնակալին: Նա անսահմանափակ իրավունքներով օժտված տիրակալ էր: Թեև երկրում գործում էր «Բարձրագույն խորհուրդ» կոչված խորհրդակցական մարմինը, սակայն նրա անդամները նշանակվում էին շահի կողմից և, բնականաբար, չէին կարող դեմ գնալ նրա կամքին⁹¹:

Նահանգների կառավարումն իրականացվում էր շահի կողմից նշանակված *բեկլարբեկերի* կողմից: Այդ հանգուցային և կարևոր պաշտոնում սովորաբար նշանակվում էին կա՛մ շահի մերձավորագույն ազգականները, կա՛մ շահին հավատարիմ ազնվականության աչքի ընկնող ներկայացուցիչները, որոնք տարիների ընթացքում ապացուցել էին իրենց անձնական նվիրվածությունը շահին: *Բեկլարբեկերն* իրենց ձեռքերում էին կենտրոնացնում նահանգների ինչպես վարչական, այնպես էլ ռազմական իշխանությունը: Հետևելով հին իրանական ավանդույթներին՝ շահը *բեկլարբեկերի* իշխանությունը սահմանափա-

⁹⁰ خلیلی نسیم، تاریخ صفویه، تهران، انتشارات ققنوس، 1387، ص. 68-72.

⁹¹ Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 325:

կելու և նրանց մշտական հսկողության տակ պահելու նպատակով վերջիններիս մոտ նշանակում էր տեղակալ (ջանեշին), որն անմիջականորեն ենթարկվում էր ո՛չ թե Բեկլարբեկին, այլ շահին և հանդիսանում էր նրա «սպքը», «ականջը» և «լեզուն»: Նա Բեկլարբեկի վարքագծի և նահանգում ամեն մի անցուղարձի մասին գաղտնի տեղեկություններ էր հաղորդում շահին: Ի դեպ, նման ֆունկցիա կատարող մարդկանցից ջանեշինը միակը չէր: Բեկլարբեկի շրջապատում կային մեծ թվով հայտնի ու անհայտ աստիճանավորներ, որոնց գործը լրտեսելն ու շահին ամեն ինչի մասին իրազեկ դարձնելն էր:⁹² Այդ համակարգի շնորհիվ շահը ժամանակին կարողանում էր ճնշել Բեկլարբեկերի կողմից ամեն մի խռովության կամ ապստամբության փորձ:

Շարդենը գնահատանքով է արտահայտվում շահ Աբբաս Ա-ի կողմից երկրի ղեկավարման համար կիրառված եղանակի մասին ու ափսոսանքով՝ նրա կորստի կապակցությամբ. «Նա արդար թագավոր էր, որ աշխատում էր իր երկրի և ժողովրդի բարօրության և երջանկության համար: Նա երկրի ղեկավարությունը ստանձնեց այն ժամանակ, երբ երկիրը ավիրված և թալանված էր: Այդուհանդերձ այն ձեռքբերումները, որ նա կարողացավ ունենալ իր թագավորության ընթացքում, անգնահատելի էր, սակայն, դժբախտաբար, երբ այս հզոր թագավորը հեռացավ կյանքից, երջանկությունը ևս երես թեքեց երկրից»:⁹³ Շահ Աբբաս Ա-ի մահից հետո մինչև աֆղանների կողմից

⁹² Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 325, 326:

⁹³ فریر راتلد دبلیو، برگزیده شرح سفرنامه شاردن ترجمه: حسین هژیریان/ حسن اسدی، تهران، نشر فرزان روز، 1388، صص. 158-159. (Ronald W. Frier, Bargozideh Safarnameh Sharden, tarjome Hosein Hazhirian/ Hassan Asadi, Tehran, nashre Farzan rouz, 1388, pp. 158-159).

Սպահանի գրավումը Սեֆյան հարստությունը աստիճանաբար մոտենում էր իր անկմանը:

Երրորդ շրջանում երկրի ուժերի վերադասավորումը ամբողջացավ: Զինվորական ուժերը թուլացել էին և այլևս անընդունակ էին դիմակայել բելուջների և աֆղանների հարձակումներին: Զինվորական ուժերի թուլացմանը զուգահեռ թուլացել ու անգործունակ մեքենայի էին վերածվել նաև երկրի վարչական կառույցները⁹⁴:

Սեֆյան պետության զարգացման երրորդ շրջանում զգալիորեն տարանջատվեցին կրոնական և աշխարհիկ կառույցները: Կրոնական դասը, որն այլևս լիովին չէր գտնվում աշխարհիկ հսկողության ներքո, սկսեց ամրապնդել իր դիրքերը: Նրանց դերակատարության ուժեղացումը ավելի նկատելի դարձավ Սեֆյան երկու թույլ գահակալներ շահ Սուլեյմանի և շահ Սուլթան Հուսեյնի գահակալության օրոք, որոնց միասնական գահակալությունը կազմում է շուրջ քառասունվեց տարի (1666–1722 թթ.)⁹⁵:

Սեֆյան իշխանության հարկային քաղաքականության կապակցությամբ Եսայի Հասան Զալալյանցի «Պատմութիւն Համառօտ Աղուանից երկրի» աշխատության մեջ հանդիպում ենք հետևյալ տեղեկության, ուր հեղինակը ժամանակի պարսիկ իշխանավորների վերաբերմունքի վերաբերյալ նկատում է. «Զայս ամենայն, զոր գրեցաք՝ նորահնար չարիք էր, զոր եղին ի վերայ առաջնոյ սահմանեալ հարկացն, որ և առաջինն եւս ծանրագոյն էր բեռն ի վերայ ժողովրդեան, այժմս փոխանակ թեթեւացու-

⁹⁴ Բիտր Եսկոն / لورنس لاكهارت، تاريخ ايران، ص. 230.

⁹⁵ Նույն տեղում, էջ 230–231:

ցանելոյ, զայս քան ևս յաւելին ի վերայ»:⁹⁶ Իրանական պետության կառավարման համակարգի թուլացման պատճառների վերաբերյալ Եսայի Հասան Ջալալյանի դիտարկած հանգամանքը և՛ համակարգի ուռճացման գործընթացի պայմաններում հանդիսացավ այն գործոնը, որն արագացրեց պետության կազմաքանդման գործընթացը:

Սեֆյան հարստությունը տասնութերորդ դարի առաջին տասնամյակներում տնտեսական, քաղաքական և գաղափարական դիտանկյունից ճգնաժամի մեջ էր գտնվում: Պետության ֆինանսական խնդիրները և իշխող խավի մեջ տեղի ունեցող հակամարտությունները թուլացրել էին նաև երկրի ռազմական վրացի բարձրաստիճան զինվորական ղեկավարները, զինմի այլակրոնների համայնքները, սուննի քոչվոր ցեղերը, որոնք ապրում էին կայսրության սահմաններում և կովկասյան վիլայեթներում, Բելուջեստանում, Խուզիսթանում և Աֆղանստանում, քաղաքականապես օտարված էին և հաճախ չէին ենթարկվում կենտրոնական իշխանությանը: Մի փոքրիկ աֆղանական բանակ կարողացավ 1722 թվականին կործանել Սեֆյան հարստության հիմքերը, և վիլայեթներում տեղակայված բանակներից ոչ մեկը չօժանդակեց և օգնության ձեռք չմեկնեց շրջափակման մեջ գտնվող Սեֆյան շահին: Վերջին տասնամյակների ընթացքում անուշադրության մատնված բանակը, կուտակված ներքին անհանդուրժողականության պատճառով որևէ միջոցի ձեռնարկելը անիմաստ էր համարում⁹⁷:

⁹⁶ Եսայի Հասան Ջալալյանց, Պատմութիւն Համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 16:

⁹⁷ فوران جان، مقاومت شکننده تاريخ تحولات اجتماعي ايران (از صفويه تا سالهای پس از انقلاب اسلامی)، ترجمه: احمد تدین، تهران، انتشارات مؤسسه خدمات فرهنگی ققنوس، 1377، ص. 159.

Իրանում պետության կառավարման գործը կազմակերպելու համար գոյություն է ունեցել ուղեցույցների պատրաստման ավանդույթը: Պարսկական այդօրինակ հին աղբյուրներից է եղել Նասիր ալ-Թուսի Նիզամ ալ-Մուլքի «Սիասաթ-նամեն», որը Սելջուկյան պետության վարչակառավարման ու հարկային համակարգն արտացոլող կարևոր աղբյուրներից է, նաև Համդալ-լահ Մուսթովֆի Ղազվինիի կողմից գրված «Նուզհաթ ալ-դուլուբ», որը վերաբերվում է Իրանի մոնղոլական ժամանակաշրջանի աշխարհագրական բաժանումներին և հարկահանման եղանակին: Երկրի կառավարման համար Սեֆյան հարստության ժամանակաշրջանում ևս գոյություն են ունեցել վարչական կառավարման ուղեցույցներ և կանոնակարգեր:

Սեֆյան հարստության գահին տիրացած աֆղանների համար խիստ անհրաժեշտ էր պետական կառույցի ղեկավարման և վարչական բաժանումների շուրջ ձեռք բերել համապատասխան գիտելիքներ և տեղեկություններ: Նրանց թվում էր, որ նման ուղեցույցների օգտագործումը կնպաստի երկրի վարչական կայունության, ղեկավարման գործընթացը արդյունավետ իրականացնելուն, որի միջոցով հնարավոր կլինի վերադարձնել երկրի նախկին փառքը:⁹⁸ Նմանօրինակ պահանջից ելնելով գրի առնվեց «Թագքիդաթ ալ-մուլուք» (Արքաների հիշատակարան) աշխատությունը, որը վերաբերում է Իրանում վարչական համակարգի և սոցիալ-տնտեսական հարաբերությունների հիմնահարցերին այն ժամանակաշրջանում, երբ Սեֆյան պետական համակարգն արդեն ճգնաժամի մեջ էր, արքունիքը գրավված էր աֆղանների կողմից, ինչի արդյունքում երկրի նոր կառավարում

⁹⁸ یوسف رحیم لو، مقاله: منبعی تازه یاب در سازمان اداری حکومت صفوی، نشریه دانشکده ادبیات و علوم انسانی دانشگاه تبریز، شماره 133، صص. 9-10.

ձևավորելու նպատակով անհրաժեշտություն էր առաջացել համակարգված ուսումնասիրելու և ներկայացնելու Սեֆյան պետականության հիմնական սկզբունքները աֆղանների կողմից դրանք օգտագործելու նպատակով: Աշխատությունը գրվել է 1726 թվականին Աշրաֆ Աֆղանի հրամանով և Սեֆյան Իրանի վարչական կառույցի ծալքերին լավատեղյակ պաշտոնյա Միրզա Սամի'այի կողմից: Պարսիկ գիտնական դոկտ. Մուհամմեդ Թաղի Դանեշիաժուհը գրքի հեղինակ Միրզա Սամի'այի մասին գրում է՝ «Հավանաբար Թագքիրաթ ալ-մուլուքի անհայտ հեղինակ Միրզա Սամի'ան նույն ինքը Ամիր Մուհամմեդ Սամի Քարխանեն է, Սեֆյան շրջանի «Ռուսթամ ալ-թավարիխ» պատմագրական աշխատության հեղինակ Ամիր Շամսեդդին Մուհամմեդ Քարխանեի եղբայրը, որի տղան Ամիր Մուհամմեդ Հուսեյնը և թոռը Աղա Մուհամմեդ Հաշեմ Ասեֆ Հուսեյնին հայտնի էր Ռուսթամ ալ հոքամա անունով»: Այսպիսով, Դանեշիաժուհը բացահայտում է, որ Միրզա Սամի'ան «Ռուսթամ ալ-Թավարիխի» հեղինակի հետ անմիջական ազգակցական կապ է ունեցել⁹⁹:

«Թագքիրաթ ալ-մուլուքում» ներկայացված են Սեֆյան Իրանի վարչական կառուցվածքը, Սեֆյան կենտրոնական ապարատի ու շրջաններում գործող պաշտոնյաների գործառույթներն, հասարակության մեջ եղած բաժանումները, ուր տեղեկություններ կան ժամանակի տնտեսական հարաբերությունների վերաբերյալ, նշվում են մարզերի հաքիմների պարտականությունները, եկամուտները և նրանց կողմից վճարվող հարկերը, տեղեկություններ և վիճակագրական տվյալներ են հաղորդվում քա-

⁹⁹ دانش پژوه محمد تقی، مقاله: دستورالملوک میرزا رفیعا و تذکره الملوك میرزا سمیعا، منبع: زبان و ادبیات مجله دانشکده ادبیات و علوم انسانی دانشگاه تهران، مرداد 1347، شماره 63 و 64، ص. 476.

ղաքներում տեղակայված զինվորական ուժերի և կառույցների եկամուտների, ծախսերի և պաշտոնյաներին վճարվող աշխատավարձերի մասին: Գիրքը բաղկացած է հինգ գլխավոր բաժիններից, ուր խոսվում է պաշտոնատար անձանց և նրանց ենթակաների աշխատանքների և պատասխանատվությունների մասին: Կրոնական պաշտոնների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ նրանում եղած բացատրությունները հակիրճ են, սակայն բավականաչափ լուսաբանող: Գիրքը արտացոլում է Սեֆյան հարստության անկման ժամանակաշրջանը, քանի որ դիվանական պաշտոնների բաժանումների մեջ նշվում է մոլլաբաշի պաշտոնը, իսկ այդ պաշտոնը ձևավորվել էր Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի գահակալության վերջին տարիներին:

Երկրի ղեկավարման համար Սեֆյան տիրակալների ձևավորված իշխանության նպատակն էր կառավարումը ամբողջությամբ կենտրոնացնել շահի ձեռքում՝ սահմանելով ներքին և արտաքին խիստ հսկողություն, ձևակերպել վարչական ղեկավարման համար նոր և կազմակերպված համակարգ: Այդ համակարգի օգնությամբ վերահսկել երկրի ներքին կյանքը ամենայն բծախնդրությամբ, որի շնորհիվ ավելի քան երկու դար Սեֆյան իշխանավորներին հաջողվեց ղեկավարել երկիրը: Այսպիսով, այդ համակարգը արտացոլող և ժամանակի սկզբնաղբյուրների մեջ լավագույն կերպով նկարագրող աշխատություններից է «Թագքիրաթ ալ-մուլուք» երկը:

«Թագքիրաթ ալ-մուլուքից» գատ Սեֆյան ժամանակաշրջանից պահպանվել է «Դասթուր ալ-մուլուք» (Թագավորների կար-

գը)¹⁰⁰ աշխատությունը, որը ևս ներկայացնում է ժամանակաշրջանի վարչակառավարման համակարգը: Այն առաջին անգամ իրանցի պատմաբան Դանեշվաժուհի աշխատասիրությամբ երեք հատվածներով հրատարակվել է «Թեհրանի պետական համալսարանի» պատմաբանասիրական ֆակուլտետի պաշտոնական մեջ: «Դասթուր ալ-մուլուքի» հեղինակն է Մուհամմեդ Ռաֆի' Անսարին, կամ ինչպես նրան կոչել են ժամանակին՝ Միրզա Ռաֆի'ան: Գրքի հեղինակն այն պատրաստել էր նախքան աֆղանների կողմից Սպահանի գրավումը, շահ Մուլթան Հուսեյնի գահակալության ժամանակաշրջանում (1694-1722 թթ.) և նրա անունից: Միրզա Ռաֆի'ան զբաղեցրել է *մուսթովֆի ալ-մամալեքի* պաշտոնը:

Իրանցի հետազոտող դոկտ. Մուհամմեդ Թաղի Դանեշվաժուհը գրում է. «Նմանատիպ աշխատությունների պատրաստումը ընդունված է եղել կազմել Սեֆյան յուրաքանչյուր գահակալի օրոք և դրանք գրվել են ժամանակի գահակալող շահի անունից: Երկու աշխատություններն էլ (խոսքը «Դասթուր ալ-մուլուքի» և «Թագքիրաթ ալ-մուլուքի» մասին է) գրվել են միննույն սկզբնաղբյուրի հիման վրա, որը հավանաբար ավելի ծավալուն է եղել և յուրաքանչյուրի մեջ գոյություն ունի տեղեկություն, որ մյուսի մեջ բացակայում է, ուստի Սեֆյան ժամանակաշրջանի վարչական և հասարակական պատմության ուսումնասիրության դիտանկյունից երկու սկզբնաղբյուրների տեղեկությունները միմյանց լրացնում են¹⁰¹», որով հնարավոր է

¹⁰⁰ میرزا رفیعا، دستور الملوك ، به کوشش و تصحیح محمد اسماعیل مارچینکوفسکی، ترجمه علی کردآبادی، با مقدمه منصور صفت گل، به سفارش مرکز اسناد و تاریخ دیپلماتی، تهران، وزارت امور خارجه، مرکز چاپ و انتشارات، 1385 ، مقدمه اول،

¹⁰¹ دانش پژوه محمد تقی، دستور الملوك، ص. 484.

դառնում ավելի ամբողջական պատկերացում կազմել Սեֆյան Իրանի վարչական պատմության և նրա զարգացման գործընթացի վերաբերյալ:

«Դասթուր ավ-մուլուքը» ժամանակաշրջանի հասարակական, տնտեսական և քաղաքական բազմաթիվ հարցեր ընդգրկող աշխատություն է, որը հանդիսանում է Սեֆյան Իրանի պետականավարման կառուցվածքի համապարփակ տեղեկագիր, ներկայացնելով ղեկավարման կառույցի գործընթացներն ու ծանրանալով հիմնականում հետևյալ խնդիրների վրա՝ երկրի տնտեսության և երկրագործության վիճակի բարելավման, ղեկավարման, վարչական գործընթացի և զինվորական կառույցի ու նրա աստիճանակարգության վերաբերյալ: Այն կարևոր է նաև երկրի քաղաքական աշխարհագրությանը, ժամանակաշրջանի պաշտոնների և աշխատանքների, ինչպես նաև նրանց եկամուտների և տնտեսական իրավիճակի շուրջ իր կարևոր և օգտակար մանրամասների ու տեղեկությունների պարունակությամբ¹⁰²:

Վերջին շրջանում այդ երկու աշխատություններից գատ, նմանօրինակ թեմայով երևան է եկել և շրջանառության մեջ դրվել մի այլ կարևոր աղբյուր ևս: Այն հրատարակվել է Յուսեֆ Ռահիմլուի ջանքերով 1992 թվականին և կոչվում է «Ալդաբ վա մավաջեբ-ե դորեհ-ե սալաթին-ե Սաֆավի» (Սեֆյան միապետների ժամանակաշրջանի պաշտոնների անվանումները և վարձատրությունները):¹⁰³ Այս աշխատության հեղինակը Միրզա Ալի Նադի Նասիրին է, որը շահի *մաջլեսնիխան*¹⁰⁴ է եղել: Գիրքը

¹⁰² دانش پڑوه محمد تقی، دستورالملوک، صص. 495، 504.

¹⁰³ میرزا علی نقی نصیری، القاب و مواجب دوره سلاطین صفوی، تصحیح دکتر یوسف رحیم لو، انتشارات دانشگاه فردوسی، مشهد، 1371.

¹⁰⁴ Սեֆյան վերջին շահի Շահ Սուլթան Հուսեյնի (1105/1694-1135/1722) *մաջլեսնիխան* է եղել:

ամբողջությամբ չի պահպանվել, ու նրա սկզբնական բաժնի էջերից որոշ հատվածներ պակասում են: Այնուամենայնիվ երկը մյուս երկու աշխատությունների համեմատությամբ զանազանվում է նրանով, որ տվյալ աշխատության մեջ կատարվում են արժևորումներ պաշտոնը կրող անհատների և նրանց ժամանակաշրջանի ու իրավիճակի վերաբերյալ: Այդ աշխատությունը լրացնում է «Թագքիրաթ ալ-մուլուքի» և «Դասթուր ալ-մուլուքի» արժեքավոր տվյալները ժամանակաշրջանի պաշտոնների վերաբերյալ:

Ժամանակաշրջանի պաշտոնների և նրանց գործառույթների մասին բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել պատմական վավերագրերում, որոնք մեծ արժեք ունեն պատմական իրականության ոչ միայն բնութագրման, այլև վերաարժեքավորման և ժամանակաշրջանի վարչական պատմության իրականության արտացոլման տեսակետից: *Քալանթարի* պաշտոնի վերաբերյալ հետաքրքրական մանրամասներ է բովանդակում Իրանի ազգային գրադարանի վավերագրերի ազգային կենտրոնում պահպանվող շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակը, որով Միրզա Մուհամմեդ Ջաֆերին նշանակվում է Սպահանի *քալանթար*: Հրովարտակը կարևոր է Սեֆյան շահերի կողմից ենթականերին պաշտոնի նշանակման եղանակի և պարտականությունների գատորոշման ու նրանց պարտականություններին ծանոթանալու տեսանկյունից: Նշանակելով վերոհիշյալին այդ պաշտոնում՝ նրան հրահանգվում էր՝ «.... որպեսզի նա, կատարելով իր պարտականությունները, բարեխղճորեն վերահսկի, որ ուժեղների կողմից թույլերը և ենթակաները ճշման չենթարկվեն.... Իսկ մայրաքաղաքի բոլոր *դազիները* և բնակիչները, պետք է նշված քալանթարին իրենց գլխավորը համարելով, ենթարկվեն նրա խոսքին ու որոշումներին և

չիրաժարվեն այդ բոլորից, ինչպես նաև արհեստների վարպետները, գյուղապետերը և շրջանների գլխավորները առանց նրա գրավոր թույլտվության որևէ հարցում իրենց ենթակաների նկատմամբ ինքնագլուխ որոշումներ չկայացնեն, քանի որ նրա միջոցով է կատարվում այդ անհատների պաշտոնների փոփոխության իրավունքը....»¹⁰⁵: «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ Սպահանի քալանթարի պարտականությունների վերաբերյալ տեսնում ենք մոտավորապես նույն բացատրությունը, ինչ վերը մեջ բերված վավերագրում: Փաստորեն վավերագիրը գալիս է հաստատելու ժամանակաշրջանի սկզբնաղբյուր «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ պահպանված տեղեկությունը քալանթարի պաշտոնի վերաբերյալ:

Ժամանակի հայ հեղինակների մոտ ևս վարչական պատմության և «Թագքիրաթ ալ-մուլուքի» բովանդակությանը կապվող նյութերի կապակցությամբ հանդիպում ենք որոշ ակնարկների: Հայ հեղինակները տեղեկություններ են հաղորդում ժամանակի մի շարք պաշտոնների վերաբերյալ: Եսայի Հասան Զալալյանցը իր աշխատության մեջ անդրադարձել է դրանցից մի քանիսին, որոնց մենք հանդիպում ենք նաև «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ. «Եւ դարձեալ որպէս սովորութիւն է Պարսից իշխանութեան յամենայն քաղաքս տէրութեան իւրեանց, և ի վերայ ամենայն երկրի, պէտս և գլխաւորս զօրաց կացուցանել, որպէս *խան, սուլդան, դուլբեկի, վեզիր, դարուղայ, և թիուլտայ*»:¹⁰⁶

¹⁰⁵ Իրանի ազգային գրադարանի վավերագրերի ազգային կենտրոնում վավերագիր համար 997-61:

¹⁰⁶ Եսայի Հասան Զալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ 16:

Մեֆյան Իրանի վարչական բաժանումները:

Հետաքրքրական են «Թագքիրաթ ալ-մուլուքի» տեղեկությունները Մեֆյան Իրանի անկման ժամանակաշրջանի սահմանների և վարչական բաժանումների վերաբերյալ: Ինչպես հայտնի է, գրքում երկիրը բաժանված է չորս գլխավոր վիլայեթների և տասներեք բեկլարբեկությունների: Երկրի հարավում՝ Արաբստանի, հարավ արևմուտքում՝ Լուրիստանի, հյուսիսում՝ Վրաստանի, իսկ արևմուտքում Քուրդիստանի վիլայեթներն էին գտնվում: Համաձայն «Թագքիրաթ ալ-մուլուքի», Մեֆյան Իրանի բեկլարբեկությունները 13-ն էին. «Առաջին՝ Ղանդահար, երկրորդ՝ Շիրվան, երրորդ՝ Հերաթ, չորրորդ՝ Ազարբայջան, հինգերորդ՝ Չուխուր-Սաադ¹⁰⁷, վեցերորդ՝ Ղարաբաղ և Գյանջա (Գանձակ),

¹⁰⁷ Չուխուրսադ կամ Երևանի վիլայեթի կուսակալությունը (վիլայեթ, խանություն, փաշայություն, բեյլարբեկություն, սարդարություն) ձևավորվել է կարա-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության շրջանում: Թուրքմենական մի քանի ցեղեր XIV դարի վերջերին արդեն միավորված էին ուն Ամիր-Սաադի իշխանության ներքո, և դրանք իրենց ցեղապետի անունով հետագայում կոչվեցին սաադլուներ: Նրա անունով են կոչվել նաև այդ ցեղերի բնակչության շրջանները՝ հին Արշարունիք կամ Երասխաձոր (այժմ Կադզվան), Ճակատք (Սուրմալու) ու մասամբ Մասյացոտն գավառները և հարակից մի քանի շրջաններ: Դրանք բոլորը միասին կազմեցին մի կուսակալություն, որը Ամիր-Սաադի անունով օտարները կոչեցին Չուխուր-Սա'դ կամ Չուգուր-Սաադ, իսկ հայերը՝ Սաաթի փոս կամ Սահաթափոս (Սաադիփոս): Հ. Փափազյանը, վկայակոչելով Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային ֆոնդերից մի կալվածագիր (Կաթողիկոսական դիվան. թղթապանակ 1 գ, վավ. 1004), գրում է, որ «Չուխուր-Սա'դ» անվան առաջին հիշատակությունը, ինչքանով մինչև այժմ է հայտնի, վերաբերում է 1428 թվականին, միաժամանակ նշելով, որ այդ անունը պետք է տրված լիներ Ամիր-Սաադի կենդանության օրոք XIV դ. Վերջերին: Մեզ հետաքրքրող ժամանակների պարսկական մատենագրության մեջ «Չուխուր-Սաադը» թարգմանվել է «Երջանիկ փոս» կամ «Երջանիկ հովիտ» իմաստով: Այդ

յոթերորդ՝ Ասթարաբադ, ութերորդ՝ Քոհգիլուիե, իններորդ՝ Քիրման, տասներորդ՝ Մերվ Շահիջահան, տասնմեկերորդ՝ Ալիշաբար, տասներկուերորդ՝ Սուրբ Մեշհեդ և տասներեքերորդը՝ թագավորանիստ Ղազվին»։¹⁰⁸

Մեֆյան Իրանի ներքին բաժանումների կապակցությամբ այլ հիշատակության ենք հանդիպում Կրուսինսկու ճամփորդական հուշագրության մեջ։ Կրուսինսկին նշում է. «Մեֆյան շահ Իսմայիլի ժամանակից մինչև շահ Սուլթան Հուսեյնի ժամանակաշրջանը նրանք ղեկավարել են տասներկու երկիր. Առաջին՝ Իրաքը (աջեմի), երկրորդ՝ Խուզիսթան, երրորդ՝ Լուրիստան, չորրորդ՝ Ֆարս և Քերման, հինգերորդ՝ Մեքքան, վեցերորդ՝ Սեմնան, յոթերորդ՝ Ղանդահար, ութերորդ՝ Զաբուլեսթան, իններորդ և տասներորդ՝ Խորասան և Մազանդարան, տասներորդ Գիլան, տասնմեկերորդ՝ և տասներկուերորդ՝ Ագարբայջան,

կուսակալության Չուգուր-Սաադ անունը գործածական է եղել պարսկական ու թուրքական մատենագրության մեջ։ Մեր աղբյուրները, ինչպես ասվեց, Չուգուր-Սաադ վիլայեթը սովորաբար կոչել են Սահաթափոս։ Օտարածին այդ անունների հետ մրափոխ գործածության մեջ էին մնացել նաև հին հայկական վարչատերիտորիալ միավորների՝ Արարատյան երկրի, Կոտայք գավառի և այլոց անունները, որոնք չնայած տերիտորիալ իմաստով լիովին չէին համընկնում նշվածների հետ։ Չուգուր-Սաադը, Սահաթափոսը, Արարատյան երկիրը և մյուսները գործածությունից դուրս էին եկել, դրանցից միայն առաջինը շարունակվում է որոշ չափով գործածական մնալ թուրքական ու պարսկական աղբյուրներում՝ ընդհուպ մինչև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը։ (Թ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1500—1800 թթ.), Երևան, 1971, էջ 139)։

¹⁰⁸ میرزا سمیعہ، تذکرہ الملوک، تهران، انتشارات امیرکبیر، 1368، ص. 5.

որը բաղկացած է Երևանից և Շիրվանից, ինչպես նաև Վրաստանից ու Դաղստանից»:¹⁰⁹

Երկրի վարչական բաժանումների հարցում ժամանակաշրջանի այլ աղբյուրների բովանդակած տվյալները մասնակի կերպով տարբերվում են «Թագքիրաթ ալ-մուլուքի» տեղեկություններից: Կրուսինսկու հիշատակած տարբերակում նախ նշվում են տասներկու երկրի (կամ վիլայեթի) անուն «Թագքիրաթ ալ-մուլուքի» տասներեք բեկլարբեկության փոխարեն, որոնցից միայն երեքը՝ Քերմանը, Խորասանը («Թագքիրաթի» մեջ Սուրբ Մեշհեդ) և Ագարբայջանը «Թագքիրաթի» մեջ հիշատակված բեկլարբեկությունների ցանկից են: «Թագքիրաթում» հայկական տարածքները նշվել է Զուխտուր-Սաադ անունով, իսկ Կրուսինսկին նրանց ընդգրկել է Ագարբայջանի վիլայեթի և նրան ենթակա շրջանների կազմի մեջ «Երևան» անվանումով:

Այս հանգամանքը պայմանավորված է թերևս այն իրողությամբ, որ 15-րդ դարից Թավրիզ կենտրոնով «Ագարբայջան» վարչական միավորի մեջ էին ներառվում հարակից «հին Աղվանքն ու Պատմական Հայաստանի Արցախ և Սյունիք նահանգներն ամբողջությամբ և Վասպուրական ու Այրարատ նահանգների արևելյան գավառների մեծ մասը»¹¹⁰: Մեֆյան ժամանակաշրջանում Ատրպատականում պաշտոնավարող վեզիրին հաճախ հանձնարարվում էր այդ շրջանի բեկլարբեկի հետ միասին քննել ու արգելել Ղարաբաղի ու Զուխտուր-Սաադի բեկլարբեկությունների տարածքում տեղի ունեցող անօրինակա-

¹⁰⁹ سفرنامه کروسینسکی (یادداشت‌های کشیش لهستانی عصر صفوی)، ترجمه: عبدالرزاق دنبلی مفتون، تهران، 1363، ص. 23.

¹¹⁰ 2. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կավվածագրեր, պրակ Ա, Երևան, 1968, էջ 144:

նությունները¹¹¹: Տվյալ դեպքում «Ազարբայջան» վարչական միավորը ստանում էր ավելի լայն վարչական իմաստ, ինչպես «Արմենիա» վարչական միավորը Արաբական խալիֆայության կազմում, որն ընդգրկում էր ամբողջ պատմական Հայաստանը, նաև Ադվանքն ու Վրաստանը մինչև Կովկասյան լեռնաշղթա¹¹²: Շարդենի ուղեգրության մեջ նշվում է, որ հարկային առումով Սեֆյան Պարսկաստանը բաժանված էր չորս մասի. Իրաք, Ֆարս, Ազարբայջան և Խորասան¹¹³: Իսկ «Թագքիրաթ ալ-մուլուքում» վերոհիշյալ բաժանումը արտահայտված է չորս ավարեջենիխներին հատկացված մասում¹¹⁴:

Բացի այդ, Շարդենի կողմից վարչական բաժանումների կապակցությամբ պահպանված հիշատակության մեջ կարդում ենք. «Իրանցի աշխարհագրագետները երկիրը բաժանել էին քսանչորս էյալեթների (վիլայեթների), որոնք բաղկացած էին հինգ հարյուր քառասուն գլխավոր կենտրոններից և վաթսուս հազար գյուղերից»¹¹⁵ Թեև Շարդենը չի նշել, թե որոնք են այդ քսանչորս էյալեթները, սակայն կարելի է ենթադրել, որ տվյալ դեպքում գործ ունենք Սեֆյան պետության ավելի փոքր վարչական միավորների հետ, ինչպիսիք են խանություններն ու սուլթանությունները:

¹¹¹ Բ. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ III, Երևան, 2005, վավ. 24, 40, 45, 47, 52, 53, 55:

¹¹² Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 16, 132:

¹¹³ Tadhkirat al-mulūk, A manual of Safavid administration (circa 1137/1725), Persian text in Facsimile, translated and explained by V. Minorsky, London, printed by W. Heffer and sons LTD., 1943, p. 162.

¹¹⁴ Տե՛ս ստորև, էջ 174-5:

¹¹⁵ 54. فرير رانلد دبليو، برگزیده شرح سفرنامه شاردن، ص. 54. (Ronald W. Frier, Bargozideh Sharh-e Safarnameh-ye Sharden, p. 54).

Սեֆյան ժամանակաշրջանի մեկ այլ ճանապարհորդ Թավերնիեն իր հուշագրության «Իրանի տարածքը և վիլայեթների բաժանումը» գլխում Սեֆյան Իրանի վարչական բաժանումների կապակցությամբ գրում է. «Ուրեմն կարելի է Իրանի իսկական վիլայեթները, նրանց գտնվելու վայրը և ներկա ժամանակում իրար նկատմամբ ունեցող հարաբերությունները և այդ վիլայեթների մեջ գոյություն ունեցող քաղաքների անունները թվարկել ըստ հետևյալի՝ առաջին՝ Հայաստանի (Արմանեսթանի) վիլայեթ, երկրորդ՝ Դիարբեքիր, երրորդ՝ Քուրդիստան, չորրորդ՝ Արաբական Իրաք, հինգերորդ՝ Աջամի (Պարսկական) Իրաք, վեցերորդ՝ Շիրվան, յոթերորդ՝ Գիլան և Մազանդարան, ութերորդ՝ Ասթարաբադ, իններորդ՝ Բաքթրիա (Bactriane) և Սողդիանա (Sogdiane), տասներորդ՝ Խորասան, տասնմեկերորդ՝ Չափուսթան (Paropamisus), տասներկուերորդ՝ Սաջեսթան (Սիսթան), տասներեքերորդ՝ Արախոսիա (Arachosie), տասնչորսերորդ՝ Մեքրան, տասնհինգերորդ՝ Քերման, տասնվեցերորդ՝ Ֆարսեսթան (կամ՝ Ֆարս), վերջին վիլայեթը Խուզիսթանն է»¹¹⁶ Թավերնիեն յուրաքանչյուր վիլայեթի անվան հետ նշում է նաև այն քաղաքներն ու շրջանները, որ ընդգրկված են տվյալ վիլայեթի կազմի մեջ։ Թավերնիեի կողմից նշված վիլայեթների անունները համեմատելով «Թագքիրաթի» մեջ նշված չորս վիլայեթների ու տասներեք բեկլարբեկությունների հետ՝ հանդիպում ենք ութ նոր անունների, իսկ ամենից հետաքրքիրն այն է, որ նրա մոտ վիլայեթների անունների նշման առաջին տեղում է գտնվում Հայաստանը։

¹¹⁶ سفرنامه تاورنیه، ترجمه: حمید ارباب شیرانی، انتشارات نیلوفر، تهران، 1382، صص. 11-15.
(Safarnameh Tavernieh, tarjome Hamid Arbab Shirani, entesharate Niloufar, Tehran, 1382, pp. 11-15).

Սեֆյան ժամանակաշրջանի Իրանի սահմանների հետ կապված ժամանակի հայ հեղինակների մոտ ևս հիշատակումներ են պահպանվել: Եսայի Հասան Ջալալյանցի «Պատմութիւն Համառօտ Աղուանից երկրի» աշխատության մեջ հեղինակը ընդհանուր կերպով ներկայացնում է Սեֆյան Իրանի տարածքը՝ հատկապես մանրամասն կանգ առնելով նրա մեջ ընդգրկված Կովկասյան տարածքների վրա. «Ընդ ժամանակս թագաւորութեան ազգին Պարսից՝ որ են կրօնիք Մահմետականի, յորում տիրէին բռնակալութեամբ՝ սկսեալ ի Կովկասային լեռնէ և ի յեզերաց Կասպիական ծովուն, (որ Երկաթի Դուռն կոչի,) մինչև ի Մազանդարան և Աստարապատ, և անտի սահմանօքն Յօզպէկու հատեալ ի Խորասան, և ի Ղանտահար բերդ, և անտի ձգեալ յեզր ծովուն Հնդկաց ի Բանտար քաղաք և այսր ի Շիրազ և միջոցաւ երկրաւ հասեալ մինչև ի Բաբելոն (այսինքն՝ Պաղտադ.) անդէն և այսր հատեալ սահմանօք հասեալ մինչև ի Համատան և ի ծովն Վանայ. Յորմէ և սահմանօքն Մարաց հասեալ ի Խոյ և ի Սալմաստ և Նախջաւանաւ հատեալ ի յԵրասխ գետ և անտի Սահաթիւ Կադգուանաւ և Կողբաւ անցեալ ի գետն Ախուրեան՝ որ կոչի Արփայ-չայի: Եւ անտի անցեալ Ղայդուլի անուամբ նա հանգիւ և ի սահմանս Վրաց ի Տփիսիս քաղաք և ի Կախէթ՝ իւրովք բոլոր Թեմիք և Թումանօք: Եւ ապա հատանի ի լեռոն Կովկասու, (այսինքն՝ Դարբանդ,) և ի տեղի կայից գլխաւորի լեռնորդացն, զոր Շամխալն անուանեն, և անուն տեղոյ նորին Թարխու կոչեցեալ: Արդ՝ ի յայս միջոցի ծոցոց երկրիս արեւելեայց խառն ընդ հարաւ և ընդ հյուսիս կողմանս Եւրոպիոյ՝ տիրեալ էին ազգն Պարսից, որ Ղզլպաշն կոչիւր, ունելով զաթոռ և զգահ արքայաւ նիստ մայրաքաղաքն Շօշ, (այսինքն և՛ Ասպահան) և անդ կալով

թագաւորացն՝ տիրեն և իշխեն վիճակեալ իւրոց հնազանդելոց ազգացն՝ ձգեալ յաջ և յահեակ զթէս իշխանության իւրեանց»¹¹⁷:

Երկրի տնտեսական գործունեության և գանձվող հարկերի կապակցությամբ բեկլարբեկությունները բաժանվում էին ավելի փոքր հատվածների, որոնք կոչվում էին խանություններ: Գրքի մեջ մատնանշված վարչական միավորներից գատ նաս նշվել են մի շարք անուններ, որոնք կապվում են ժամանակաշրջանի քոչվոր ցեղախմբերի հետ, որոնք ևս իրենց հերթին վճարումներ էին կատարում պետությանը, և որոնց մասին ևս գիրքը տեղեկություններ է պահպանել:

«Թագքիրաթ ալ-մուլուքի» վերջաբանի երկրորդ հոդվածը անդրադառնում է բեկլարբեկությունների եկամուտներին և աշխատողներին, ինչպես նաև հաքիմների և սուլթանների եկամուտներին, ծախսերին և այդ գործընթացը կազմակերպելու հանգամանքով պայմանավորված երկրի վարչական այլ բաժանումներին:

Սեֆյան Իրանի վարչական բաժանումների կապակցությամբ և, մասնավորապես, «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ եղած բաց թողումներից կարելի է նկատել այն պարագան, որ հիշատակված երկրորդ հոդվածի մեջ չորս վիլայեթների (Խուզիսթան/Արաքստան, Լուրիստան, Վրաստան և Քուրդիստան) վալիությունների վարչական ներքին բաժանումների և նրանցից կատարված գանձումների վերաբերյալ որևէ նշումներ չկան: Իսկ երկրի վարչական բաժանումների քարտեզը հաշվի առնելով՝ նկատելի է, որ երկրի կենտրոնական մասը չի մտել որևէ վարչական շրջանի կազմի

¹¹⁷ Եսայի Հասան Ջալալեանց, նշվ. աշխ., էջ 1, 2:

մեջ, որի պատճառը թերևս նշված տարածաշրջանում գտնվող հսկայական Լութ կոչվող անապատն է:

Վ. Մինորսկին իր աշխատության մեջ յուրօրինակ կերպով է անդադարձել Մեֆյան Իրանի վարչական բաժանումների հարցին, հիմք ընդունելով «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ նշված վարչական շրջանները, ներկայացնում է յուրաքանչյուր վարչական շրջանը, մատնանշելով դրանց աշխարհագրական դիրքերը: Սակայն նրա կողմից կատարված ուսումնասիրության մեջ նկատելի են մի շարք բացթողումներ: Որոշ տեղանունների մասին նրա ուսումնասիրության մեջ որևէ տեղեկություն չի նշվել ինչպես Ռոքհան, Քարմոուդ բնակավայրերի աշխարհագրական դիրքերի մասին, որոշ աշխարհագրական անուններ նրա կողմից չի գրվել գրքի մեջ մատնանշված եղանակով՝ օրինակ «Թուման-ե Նախիջևանը»¹¹⁸, գրվել է «Նախիջևան» ձևով, «Ղալե-ե Բայեզիդը» (Բայեզիդի բերդ)՝ «Բայազիդ» ձևով¹¹⁹: «Թագքիրաթ ալ-մուլուքի» երկրորդ գլխի նախաբանում նշված Ղալամրո-ե Ալիշաքարի բեկլարբեկության մասին, վերջաբանի երկրորդ հոդվածում որևէ հիշատակում չենք նկատում, սակայն վերջաբանի հավելվածի երկրորդ հոդվածում Իրաքի և ենթակա շրջանների բեկլարբեկության համար նշված սահմանները (համաձայն Մինորսկու) նույն այդ Ղալամրո-ե Ալիշաքարին են վերաբերում¹²⁰: Քուրդիստանը հիշատակվել է բեկլարբեկությունների կազմի մեջ¹²¹, այն ինչ

¹¹⁸ Նախիջևանը իր շրջակա գավառներով, որ իլխանների ժամանակ առանձին «թուման» դառնալով, Մեֆնիների օրոք ևս շարունակում էր կոչվել «Թուման-ե Նախիջևան» (Հայ Ժողովրդի Պատմություն, հ. 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 251):

¹¹⁹ Համեմատի՝ p. Tadhkirat al-mulūk, p. 166, և 76, 75. میرزا سميعا، تذكرة الملوك، ص.

¹²⁰ میرزا سميعا، تذكرة الملوك، ص. 84.

¹²¹ Նույն տեղում, էջ 85:

Քուրդիստանը իրականում վալիություն է: Իսկ Քոհգիլունեն հիշատակվել է Ֆարս անունով¹²²: Ղազվին մայրաքաղաքը անվան տակ բերված *բեկլարբեկության* մասին որևէ հիշատակում չկա, փաստորեն հեղինակի կողմից ամբողջությամբ մոռացության է ենթարկվել:

Համեմատելով եվրոպական, հայկական և պարսկական սկզբնաղբյուրները սեֆյան ժամանակաշրջանի վարչական բաժանումների դիտանկյունից պահպանված այլ տվյալների հետ, կարելի է հաստատել, որ որոշ սկզբնաղբյուրներ նշանակալի տարբերությամբ, իսկ որոշներն էլ առավել մոտ են եղել սեֆյան անկման ժամանակաշրջանին վերաբերող սկզբնաղբյուր՝ «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ ներկայացված վարչական բաժանումներին:

Արևելյան Հայաստանը Սեֆյան Իրանի վարչական համակարգում

Պարսկաստանին անցած հայկական նահանգներում, այսինքն՝ Արևելյան Հայաստանում, վարչական կայուն համակարգ ստեղծվեց 1639 թ. հաշտությունից հետո՝ կազմակերպվեցին ինքնուրույն վարչական միավորներ (խանություններ): Այդ խանություններից իր քաղաքական և ստրատեգիական նշանակությամբ կարևոր էին համարվում Երևանի և Ղարաբաղի խանությունները: Երևանի խանությունը կոչվել է նաև սարդարություն կամ բեկլարբեկություն, իսկ նրա խանը՝ *սարդար* կամ *բեկլարբեկ*: Այդ խանությունը իր գոյության սկզբից մինչև XVIII դ. առաջին կեսը Արևելյան Հայաստանի և Այսրկովկասի մյուս խանությունների համեմատությամբ հանդիսացել է առաջնակարգ

¹²² میرزا سمیعاً، تذکره الملوك، ص. 85-86.

վարչական և ռազմական միավոր: Նրա վրա դրված էր պարսկական պետության արևմտյան սահմանի պաշտպանության խնդիրը թուրքական բանակի հարձակումներից: Սեֆյան Իրանի վարչական համակարգի կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանի հայկական տարածքներ հանդիսացող Չուխուր-Սաադի և Ղարաբաղի բեկլարբեկությունները, իրենց աշխարհագրական դիրքի պատճառով, մշտապես գտնվել են Սեֆյան շահերի հատուկ ուշադրության կենտրոնում: Հայկական այդ երկու շրջանները կարևոր դեր են ունեցել Սեֆյան պետության արտաքին ու ներքին հարաբերություններում:

Սեֆյան ժամանակաշրջանի հեղինակավոր պատմագիրներից Իսքանդար Բեկ Թորքեման Մունշին բազմաթիվ անգամներ իր աշխատության մեջ հիշատակում է հայկական տարածքների Երևանի, Երևանի բերդի, Չուխուր-Սաադի և Ղարաբաղի անունները, ուր նաև նշել է «Փոքր Հայք» կամ, հենց իր լեզվով ասած, «Փոքր Արմենիայի» մասին: «Փոքր Արմենիայի» մասին առաջին անգամ նշվում է աշխատության առաջին հատորում, Սեֆյան շահ Մուհամմեդ Խոդաբանդեի գահակալության շրջանում օսմանյան թուրքերի հետ տեղի ունեցող պատերազմների նկարագրության առիթով, ուր հեղինակը ակնարկում է Չուխուր-Սաադը օսմանցիներին անցնելու մասին՝ «....Չուխուր-Սաադ բարեշեն շրջանը, որ Փոքր Արմենիայի¹²³ մեծ մասն է, անցավ թշնամիների ձեռքը....¹²⁴»: Այնուհետև աշխատության երկրորդ հատորում հեղինակը շահ Աբբաս Ա-ի գահակալության քսանմեկերորդ տարվա իրադարձությունների շարադրանքում, գրում է՝

¹²³ Իսքանդար Մունշին «Փոքր Արմենիա» անվանում է Արևելյան Հայաստանը:

¹²⁴ اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، جلد اول و دوم، چاپ پنجم، تهران، انتشارات امیر کبیر،

1392، ص. 293

«Այս դեպքերից հետո Կարսի բերդը հարգարժան խանի ջանքերով անցավ մեր թագավորության ենթակաների հսկողությանը, Կարսի վիլայեթը Փոքր Արմենիայի տարածքներից է, որ գտնվում է Երևանի և Էրզրումի միջև¹²⁵»։ Նույն հատորում շահ Աբբաս Ա-ի գահակալության քսաներեքերորդ տարվա դեպքերը նկարագրելիս խոսելով Թիֆլիսի մասին նշում է այդ գլխի հետևյալ ենթագլխում՝ «Հիշատակում այն իրադարձությունների, որոնք տեղի ունեցան Լոռիի, Թիֆլիսի ու Թումանուսի (Դմանիս) բերդերի և Գյանջայի (Գանձակ) բերդի ու Ղարաբաղի մուլքի գրավումից հետո», հեղինակը Թիֆլիսի գրավման ժամանակ հիշատակում է քրիստոնյա հայերին և նշում. «.....Այդ քաղաքի բնակիչները հիմնականում բաղկացած էին քրիստոնյա հայերից, վրացիներից ու փոքր քանակությամբ մուսուլմաններից, իսկ քաղաքի զանազան վայրերում նկատելի էր քրիստոնեական հնագույն աղոթավայրեր, եկեղեցիներ»¹²⁶:

Հարկ է ավելացնել, որ Սեֆյան Իրանի պատմական աշխարհագրությանը վերաբերող մի այլ աղբյուր՝ «Մոխթասար-ե մոֆիդը», թեև Սեֆյան Իրանի աշխարհագրությանը նվիրված աշխատություն է, գրքի հեղինակ Մուհամմեդ Մոֆիդը մեծապես ազդվել է Համդալլահ Մուսթովֆիի «Նուզհաթ ալ-դուլուբ» գրքից և իր աշխատությունը ձևակերպել է նրա օրինակով՝ գլխավորաբար կենտրոնանալով վիլայեթների, քաղաքների և բնակավայրերի աշխարհագրական դիրքի վրա, ուր սակայն վարչական բաժանմանը անդրադարձ չի կատարվել:

«Մոխթասար-ե մոֆիդ» գրքի «Ղարաբաղ» գլխում հանդիպում ենք հետևյալ բացատրությանը. «Մի երկիր է, որը բաժանվել

¹²⁵ 740. اسکندر بیگ ترکمان، تاریخ عالم آرای عباسی، جلد اول و دوم، ص.

¹²⁶ Նույն տեղում, էջ 718:

է մի քանի շրջանների ու գյուղերի, այնտեղ էին բնակվում հարգարժան *բեկլարբեկերից* նրանք, որ մեծ թվով զինվորականներ ունեին իրենց հրամանի ներքո: Պատմագիրները նաև հիշատակում են, որ այդ երկիրը գտնվում է Շիրվանի ու Ազարբայջանի միջև և հանդիսանում է Բարդային ենթակա շրջաններից մեկը»:¹²⁷

«Մոխթասար-ե մոֆիդ» գրքում Չուխուր-Սաադին և Երևանին վերաբերվող հատվածում կարդում ենք. «Բոլորի համար պարզ է, որ դար ալ-մուլք Չուխուր-Սաադը նույն Երևանն է, որ գտնվում է Զանգու գետի ափին: Իսկ որոշ աշխարհագրական բաժանումներում այն պատկերացումը գոյություն ունի, որ այդ վիլայեթը Բարդային ենթակա շրջաններից է, իսկ որոշներն էլ Բարդա՛ն Առանի մաս են համարել: Իրականում ճիշտն այն է, որ Բարդա՛ն գտնվում է Առանի կազմում, իսկ Չուխուր-Սաադը առանձին երկրամաս է, որ ընդգրկում է հինգ շրջան, երեք քաղաք և վիլայեթ ու վեց բերդ»: «Մոխթասար-ե մոֆիդի» Երևանին նվիրված գլխում կարդում ենք հետևյալը. «Մի վիլայեթ է, որին ենթակա են շատ տարածքներ, որ շրջապատված է աներևակայելի գեղեցիկ և դրախտային այգիներով: Հպատակ բնակիչների մեծ մասը քրիստոնյաներ են»:¹²⁸

Ժամանակաշրջանի վարչական պատմության կարևոր աղբյուր «Դասթուր ալ-մուլուքում» ևս հանդիպում ենք հայության և հայկական բեկլարբեկությունների հետ կապված հիշատակումների: Հեղինակը թվարկելով վարչական բաժանման

¹²⁷ مختصر مفید (جغرافیای ایران زمین در عصر صفوی)، بکوشش ایرج افشار با همکاری محمد رضا ابوالی

مهريزي، تهران، 1390، ص. 168.

¹²⁸ Նույն տեղում, էջ 180:

արդյունքում ձևավորված բեկլարբեկությունները՝ նշում է. «հինգերորդ՝ Չուխուր-Սաադ, վեցերորդ՝ Ղարաբադ¹²⁹»:

Թեև «Թագքիրաթ ալ-մուլուքի» գրվելու ժամանակ (1726) հայկական այդ տարածքները գտնվել են օսմանյան և ռուսական տիրապետության ներքո և աֆղանները չեն վերահսկել նշված տարածքները, այդուհանդերձ «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ նրանք ներառված են պարսից պետության ավանդական վարչական կազմի մեջ:

Վերը նշված սկզբնաղբյուրներում և «Թագքիրաթ ալ-մուլուքում» հայկական երկու բեկլարբեկությունների՝ Չուխուր-Սաադի և Ղարաբադի կապակցությամբ պահպանված ուշագրավ տվյալները հաստատում են այն տեսակետը, որ հայկական երկու բեկլարբեկությունները շարունակ գտնվել են Սեֆյան շահերի ուշադրության կենտրոնում և նույնիսկ մինչև Սեֆյան հարստության անկման շրջանը կարևոր տեղ են զբաղեցրել Սեֆյան իշխանության վարչական համակարգում:

Կրոնական ու արդարադատության համակարգ

Սեֆյան կրոնական և արդարադատության համակարգի գործունեության հիմնական սկզբունքները ուսումնասիրելու արդյունքում պարզվում է, որ այդ երկու կառույցները աշխատում էին սերտորեն փոխկապակցված ու համակարգված կերպով: Շահի վարչական կառույցի մեջ կար *դիվանբեկի* կոչվող պաշտոնյան, որը հոգևորական չէր, սակայն դատավորները և կրոնական առաջնորդները նրա ենթակա պաշտոնյաներն էին: Կենտրոնական կառույցի մեջ *սադրերն* էին *դիվանբեկիին* ուղղորդում և խորհուրդներ տալիս: Վիլայեթներում նույնպես *սադրերի*

¹²⁹ میرزا رفیعاً، دستورالملوک، ص. 186.

կողմից նշանակված կրոնական դատավորներն էին նմանօրինակ աշխատանք կատարում և դատական հարցերի քննության ընթացքում օգնում էին *հաքիմներին*։ Այդ կապակցությամբ Սանսոնը բացատրում է. «Սադրե խասսեն վիլայեթներում ուներ իր ներկայացուցիչները։ Նրանք կրոնական ղեկավարներ և ուսուցիչներ էին, որոնք դատական հարցերում օժանդակում էին հաքիմներին, և հաքիմներն առանց նրանց խորհրդատվության և իրավունքի որևէ որոշում չէին կայացնում»¹³⁰։

*Դիվանբեկի*¹³¹ պարտականությունների կապակցությամբ «Թագքիրաթ ալ-մուլուքում» մանրամասն բացատրություններ են տրվում՝ լիարժեքորեն ներկայացնելով *դիվանբեկի* աշխատանքի գրեթե բոլոր գործառույթները։

Սադրը, որը նշանակվում էր շահի կողմից, նրա ազգականներից էր։ Նա բացի կրոնական և հոգևոր հովվի պարտականությունից, զբաղվում էր նաև արքունի *վակֆային* տարածքների խնամակալությամբ։ Նա ի գործ էր այդ հողերից գոյացած եկամուտներն իր պատասխանատվությամբ օգտագործել և ծախսել։

Արդարադատության համակարգի մեջ կարևոր դեր էր վերապահված մի այլ սադրի՝ *սադր-ե ամմեին* կամ *սադր-ե մամալեքին*։ Նա կրոնական հարցերում համարվում էր շահի ներկայացուցիչը, որը նույնպես ենթարկվում էր *սադր-ե խասսեին* և *դիվանբեկին*։ *Սադրե ամմեն* իր ներկայացուցիչներն ուներ վիլայեթներում, այս բարձրաստիճան հոգևորականները ևս իրենց հերթին ընտրվում էին *սադր-ե խասսեի* կողմից։ Այսպիսով, նկատելի է, որ Մեֆյան կենտրոնական իշխանության

¹³⁰ سانسون، وضع ایران در زمان شاه سلیمان صفوی، به اهتمام تقی تفضلی، تهران، 1985، صص. 39-40.

Sanson Vaze Iran dar zamane shah Soleymane Safavi, be ehtemame Taghi Tafazoli, Tehran, 1985, pp. 39-40

¹³¹ میرزا سمیعاً، تذکره الملوك، صص. 12-13.

կողմից խստորեն վերահսկվում էր *հաքիմների* գործունեությունը, սակայն *վալիների* նկատմամբ նմանօրինակ հսկողություն չէր կատարվում:

Շրջանների բոլոր հոգևոր ներկայացուցիչները ընտրվում էին *սադր-ե խասսեի* և *սադր-ե ամմեի* կողմից, որոնք ևս իրենց պարտականություններին անցնելուց առաջ պիտի ստանային շահի հավանությունը: Արքունական վակֆային հողատարածքները վերահսկվում էին *սադր-ե խասսեի* և նրա ներկայացուցիչների կողմից, իսկ մնացյալ վակֆային հողատարածքները՝ *սադր-ե ամմեի* և նրա ներկայացուցիչների կողմից:

Հարկահանության գործընթացը

Սեֆյան Իրանի տնտեսական հարաբերությունների համակարգում ամենից կարևոր ոլորտներից էր հարկահանությունը: Սեֆյան պետության մեջ տնտեսական կառույցների մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում հարկահանման համակարգին:

Հարկերը պիտի հավաքեին *հաքիմները*, որոնց գործունեության սահմանը նախապես որոշված էր կենտրոնական իշխանության գործակալների կողմից իրենց տրամադրված ուղեցույցով: Այդ գործակալներն էին *վեզիրները*, (որոնք համարվում էին ֆինանսական գործակալներ և աշխատում էին *մուսթուֆի ալ-մամալեքի* ուղղակի հսկողության ներքո) և *վաղիեննիսը* (որը տեղեկատվության պարտականություն ուներ *սադր-ե ազամի* հսկողության տակ և գործում էր որպես նրա ներկայացուցիչ): Այս գործիչները աշխատում էին տեղական իշխանություններից (հաքիմներից) անկախ: Յուրաքանչյուր վիլայեթի եկամուտներից նախապես որոշված չափով (դրամական և գույքային եղանակով) հարկեր էին գանձվում և ուղարկվում պետական գանձարան, վիլայեթների եկամուտների մի մասը տրամադրվում էր տեղական իշխանություններին, իսկ որոշ հատված տրամադրվում

էր տվյալ վիճակում տեղակայված գորքի աշխատավարձերի վճարման համար:

Մուսթովֆի-ե դիվան-ե մամալէքը իր գործակատարների միջոցով հսկում էր հաքիմների կողմից հարկերի հավաքման գործընթացը, որպէսզի այն իրականացվի համաձայն կենտրոնական իշխանության կողմից որոշված կանոնակարգի: Պետական գաղտնի գործակալների կառույցը ևս հսկում էր հարկերի հավաքման աշխատանքը: *Մուսթովֆի-ե դիվան-ե մամալէքը* ուղղակիորեն ենթարկվում էր *սադր-ե ազամին*:

Երկրի կենտրոնական կառույցի այդ երկու պաշտոնյաների՝ *մուսթովֆի-ե խասսէի* և *մուսթովֆի-ե մամալէքի* միջև գոյություն ուներ հարկահավաքման աշխատանքի բաժանում և խիստ աստիճանակարգություն, որոնք բացատրվում են «Թագքիրաթ ալ-մուլուքում»:

«Թագքիրաթ ալ-մուլուքը» պաշտոնյաների աշխատավարձերի վերաբերյալ իր հաղորդումներով կարևոր սկզբնաղբյուր է նաև քանակի և զինվորական կառույցների համար ծախսվող գումարների քանակի և եղանակի պարզաբանման առումով ևս:

«Թագքիրաթ ալ-մուլուքի» հավելվածի երկրորդ հոդվածը տեղեկություններ է պարունակում վիճակների կառավարիչների, նրանց աշխատավարձերի և աշխատակիցների քանակի, *բեկլարբեկությունների հաքիմների* և *սուլթանների* եկամուտների և ծախսերի կապակցությամբ, ուր նշվում են սահմանային ամիրների համար որոշված գումարները և սպասավորների քանակը: Հեղինակը նախ նշում է ընդհանուր գումարը, այնուհետև նրա բաղկացուցիչ մասերը:

Այդ ցանկը ներկայացնում է տասնհինգ *բեկլարբեկությունների* և Քրդստանի ու Արաբսթանի *վալիությունների* անունները: Նախ հեղինակը գրքի սկզբում իր նշած տասներեք *բեկլարբեկություններից* երկուսի՝ Ղալամրո-ե Ալիշաքարի և Դար ալ-սալ-

թանե Ղազվինի, աշխատողների և եկամուտների կապակցությամբ որևէ տեղեկություն չի հաղորդում, իսկ մյուս կողմից էլ տալիս է Դար ալ-մարզի և ենթակա շրջանների, Իրաք (Աջամի) և ենթակա շրջանների, Քրդստանի և Արաբստանի *վալլի* աշխատողների քանակը և նրանց եկամուտների թիվը: Հարկ է նշել, որ «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ, բացի *բեկլարբեկությունների* ընդհանուր եկամուտներից նշվել է նաև նրանց ենթակա շրջանների եկամուտները: Առավել շատ աշխատողները գրանցված են Չուխուր-Սաադում: Հայկական երկու *բեկլարբեկությունների* կողմից վճարվող հարկերի գումարի չափը, մյուս *բեկլարբեկությունների* վճարների համեմատ, Ազարբայջանից հետո գտնվում էին երկրորդ և երրորդ տեղերում, որոնց եկամուտի ընդհանուր գումարը ավելի Բարձր էր, քան մնացած *բեկլարբեկությունների* եկամուտները, հատկապես համեմատելով Խորասանի և Սուրբ Մեշհեդի հետ, որոնք իրենց հերթին երկրի կարևոր *բեկլարբեկություններից* էին: Նկատելի հսկայական մեծ տարբերությունը ակնհայտորեն մատնանշում է այն հանգամանքը, որ Արևելյան Հայաստանի *բեկլարբեկությունները* ոչ միայն ռազմական այլ նաև տնտեսական առումով շատ կարևոր դիրք էին զբաղեցնում Մեֆյան համակարգում:

«Թագքիրաթ ալ-մուլուքի» հավելվածի երրորդ հոդվածը պետական բյուջեի աղյուսակն է, որտեղ նախ նշված են եկամուտները, ապա՝ ծախսերը: Հիշյալ տեղեկությունները արժեքավոր են քննարկվող ժամանակաշրջանի Իրանի տնտեսության ուսումնասիրության դիտանկյունից:¹³²

Երրորդ հոդվածում նշված թվերի մեջ մեծ տարբերություններ կան, հեղինակը ուղղակի նշում է եկամուտների թվերը, որին ավելացնում է քասրի (մի փոքր ավելի) բառը, որը թարգմանության մեջ նշել ենք + նշանով: Նախնական գումար-

¹³² میرزا سمیعاً، تذکره الملوک، ص. 16.

ման մեջ նախ կրճատվել են մանր գումարները, որոնք, սակայն, վերջնական գումարման ժամանակ ընդհանուր գումարի մեջ նորից հաշվվել են, ինչը ընդհանուր գումարների մեջ հաշվի տարբերության պատճառ է դարձել: Ուստի այս պարագայում ավելի ճշգրիտն այն է, որ նշվի գրքում մեջ բերված ընդհանուր գումարները, որովհետև նկատելի են որոշ բաժիններում հեղինակի կողմից ուղղակի մոռացության ենթարկված կամ ընդհանրապես չնշված թվական տվյալներ, իսկ թվերը տառերով գրվելու պատճառով ևս տառասխալներ են թույլ տրվել¹³³:

Երրորդ հոդվածը բաղկացած է երկու գլխից՝ եկամուտների և դրանց գանձման բաժինների ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ: Վիլայեթների եկամուտների վերաբերյալ «Թագքիրաթ ալ-մուլուքում» եղած հիշատակումների հիման վրա ստորև բերված աղյուսակում ներկայացնում ենք ընդհանուր պատկերը¹³⁴:

<u>Աղյուսակ 1</u>	
Վիլայեթների	Վիլայեթների տարեկան
Քերման	17713 թուման և 7000 դինար
Խուզիսթան	117639 թուման և 5850 դինար
Իրաք (Աջեմի)	213416 թուման և 6058 դինար
Ֆարս	142001 թուման և 3000 դինար
Ազարբայջան	161969 թուման և 8400 դինար
Դարոլմարգ	69102 թուման և 7000 դինար
Շիրվան	63784 թուման և 8900 դինար
Ընդհանուր գումար	785718 թուման և 1908 դինար

¹³³ Tadhkirat al-Muluk, p. 208:

¹³⁴ ميرزا سميعا، تذكره الملوك، ص. 88-91.

Աղյուսակի տվյալների ուսումնասիրությամբ պարզվում է, որ այստեղ ևս հեղինակի նշած *վիլայեթների* անունները չեն համապատասխանում գրքի երկրորդ զվի նախաբանում բերված չորս *վիլայեթների* անունների հետ, քանի որ դրանցից և ոչ մեկը չի ներգրավվել *վիլայեթների* եկամուտներին և ծախսերին վերաբերող այդ հոդվածի մեջ: Կատարված բացատրությունների և վերլուծությունների հիման վրա պարզվում է, որ «Թագքիրաթ ալ-մուլուքի» մեջ պահպանված տնտեսական տվյալները համակարգված կերպով չեն պահպանվել և հեղինակը հիմնականում հավելվածների հատվածում կատարել է լրացումներ, ինչպես նաև դուրս թողել որոշ *բեկլարբեկություններ*, որոնց մասին թվական տվյալներ չի ունեցել: Եկամուտների մեծ մասը ծախսվում էր, որպես պաշտոնյաների աշխատավարձեր և մնացյալը օգտագործվում արքունիքի համար:

«Թագքիրաթ ալ-մուլուքի» ձեռագրերն ու հրատարակությունները

«Թագքիրաթ ալ-մուլուք» աշխատության առաջին ձեռագիր օրինակը հայտնաբերվել է Օսմանյան կայսրության կառույցին վերաբերող Մուլթան Աբդուլ Համիդի գրադարանում, որը 1924 թվականին դարձել է Լոնդոնի Բրիտանական թանգարանի սեփականությունը, ուր պահպանվում է OR9496 համարի ներքո:

Ձեռագիր այլ օրինակներ հետազայում հայտնաբերվել են Իրանի զանազան գրադարաններում, որոնք ընդօրինակվել են տարբեր ժամանակշրջաններում: Օրինակներից մեկը գտնվում է Թեհրանի Համալսարանի պարսկերեն լեզվի բանասիրական ֆակուլտետի գրադարանում, ձեռագրի գրիչն է Ալի Մուհամմեդ Հաքիմ Մուհարամ իբն Մուհամմեդը, որը գիրքը ընդօրինակել է 1245/1829 թվականին: Գրքի մի այլ ձեռագիր օրինակ պահպանվում է Իրանի արքունական գրադարանում 1760 համարի ներքո, մեկ ձեռագիր օրինակ ևս 1257/1841 թվականին պատրաստվել է Ամիր Մահմուդ Խան Դունբուլիի պատվերով և վերջապես մեկ այլ օրինակ ևս պատրաստվել է Մուհամմեդ Շահ Ղաջարի

պատվերով 1257/1841 թվականին: «Թագքիրաթ ալ-մուլուքը» հանրահայտ արևելագետ Մինորսկու կողմից ուսումնասիրության ենթարկվելով՝ հրատարակվել է Քեմբրիջում 1943 թվականին: Գրքի հաջորդ հրատարակությունը կատարվել է պարսիկ անվանի գիտնական Մուհամմեդ Դաբիր Միադիի աշխատասիրությամբ նույն Բրիտանական թանգարանում պահպանվող լուսանկարային տարբերակի վրայից Թեհրանում 1332/1953 թ.: Իրանցի անվանի գիտնական Մասուդ Բաջաբնիան, Մինորսկու կողմից հրատարակված աշխատությունը անգլերենից պարսկերենի է թարգմանել, որով գիրքը ամբողջական մեկ հատորում վերահրատարակվել է 1334/1955 թվականին Թեհրանում:¹³⁵ Այնուհետև «Թագքիրաթ ալ-մուլուքը» բազմիցս վերահրատարակվել է: Ներկա թարգմանությունը կատարվել է Թեհրանում 1378/1999 թվականին հրատարակված օրինակից:

Սեֆյան Իրանի վարչական պատմության բազմակողմանի լուսաբանումը համաշխարհային պատմության և իրանագիտության խնդիրներից է և կարևորվում է պետությունների վարչական կառույցների ձևավորման և կայացման հոլովույթի դիտանկյունից, ոչ միայն Իրանի այլև Հայաստանի արևելյան մասի վարչատարածքային բաժանումների ուսումնասիրման համար, որը կարող է օգտակար հանդիսանալ ժամանակաշրջանի հիմնախնդիրների ապագա գիտական ուսումնասիրությունների տեսակետից:

Ժ. Մեշքանբարյան

دانش پژوه محمد تقی، مقاله: دستورالملوک میرزا رفیعا و تذکره الملوک میرزا سمیعا، صص. 475-476.¹³⁵